ՄՏՔԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵՆԴ. ԽՈՐՀՐԴՈՒՄ

Posted on November 24, 2013 by Keghart



Category: Opinions

Գերմանահայոց կենդ. խորհրդի մի խումբ անդամներ, 24 Նոյեմբերի 2013
Նոր Խոսք **Գերմանիա,** Լրագիր ՀՀ

> ***«Պետության ուղիղ ներկայացուցիչը բառացիորեն ինձ ասել է՝ եթե դու չդադարեցնես այդ քաղաքականությունը, խանգարես մեր քաղաքականությանը, ես քեզ պետական ապարատով կջարդեմ: Խոսքը Գերմանիայում Հայաստանի հանրապետության նախկին դեսպան Արմեն Մարտիրոսյանի մասին է, ով հսկայական վնաս տվեց մեր համայնքին, բաժան-բաժան արեց շատ հայկական կառույցներ:»***

Գերմանիայի հայ համայնքում ներկայումս առկա է երկու ռազմավարական հայեցակարգ՝ կարծրատիպ և նոր օրակարգային քաղաքականություն:

Մի կողմում գործում են պահպանողականները՝ հայաստանյան վարչախմբի ուղղակի կամ անուղակի աջակիցները, որոնք ամեն գնով սփյուռքահայությանը պահել ու պահում են հլու հնազանդ բարերարների դերում՝ որդեգրելով՝ «որքան հնազանդ՝ այնքան շքանշան» հայտնի կարգախոսը:

Գերմանահայոց կենդ. խորհրդի մի խումբ անդամներ, 24 Նոյեմբերի 2013
Նոր Խոսք **Գերմանիա,** Լրագիր ՀՀ

> ***«Պետության ուղիղ ներկայացուցիչը բառացիորեն ինձ ասել է՝ եթե դու չդադարեցնես այդ քաղաքականությունը, խանգարես մեր քաղաքականությանը, ես քեզ պետական ապարատով կջարդեմ: Խոսքը Գերմանիայում Հայաստանի հանրապետության նախկին դեսպան Արմեն Մարտիրոսյանի մասին է, ով հսկայական վնաս տվեց մեր համայնքին, բաժան-բաժան արեց շատ հայկական կառույցներ:»***

Գերմանիայի հայ համայնքում ներկայումս առկա է երկու ռազմավարական հայեցակարգ՝ կարծրատիպ և նոր օրակարգային քաղաքականություն:

Մի կողմում գործում են պահպանողականները՝ հայաստանյան վարչախմբի ուղղակի կամ անուղակի աջակիցները, որոնք ամեն գնով սփյուռքահայությանը պահել ու պահում են հլու հնազանդ բարերարների դերում՝ որդեգրելով՝ «որքան հնազանդ՝ այնքան շքանշան» հայտնի կարգախոսը:

Հակառակ կողմում՝ հայ ժողովրդի առաջադեմ պայքարին մաս կազմող, սատարող,

ըմբոստ մտավորականությունն է, համայնքի ուսանողությունն ու երիտասարդությունը, անկաշառ ու շիտակ մարդիկ, ովքեր չեն հնազանդվում իշխանությունների հայաստանակործան քաղաքականությանը և իրենց գործերով պաշտպանում են հայ ժողովուրդի արդարացի պայքարը, Հայաստանի Հանրապետությունում ոտքի ելած ազնիվ մտավորականության ու երիտասարդության ընդվզումներին:

Գերմանահայոց կենտրոնական խորհրդի նախագահ Ազատ Օրդուխանյանի դրական մոտեցումը Հայաստանի Հանրապետության առողջացման գործընթացքներին և նրա ակտիվ մասնակցությունը այդ պայքարին, ցանկալի չէ բոլոր նրանց համար, ովքեր սեփական շահերի թելադրանքով կապեր կամ կախվածություն ունեն Հայաստանի Հանրապետության հայաստանակործան վարչախմբից կամ ՀՀ իշխանությունների կոալիցիայի նախկին անդամ Հայ Հեղափոխական Դաշնակցության Գերագույն Մարմնից:

Վերջին մեկ տարում Գերմանահայոց կենտրոնական խորհրդի վարչության երկու անդամների՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ Ասպետ Անթապյանի և երիտասարդ վարչական Վահան Բալայանի պահվածքն ու անգործությունը, Կենտրոնական խորհրդի մարտահրավերների և աշխատանքների կատարման հարցում ցուցաբերած բոյկոտը, ինչպես նաև Ազատ Օրդուխանյանի անձին և գործին ուղղված վարկաբեկումները, նրա դեմ մղվող սանձաձակ ու անազնիվ արշավը համարում ենք Հայ Հեղափոխական Դաշնակցության զինանոցից արձակված փամփուշտ, որը ողջ Գերմանահայոց կենտրոնական խորհրդին դեռ շատ ցավեր է պատճառելու:

Ամբողջական բնագիրը՝ **«Ազատ Օրդուխանյան»**

Պարոններ Վահան Բալայանի և Ասպետ Անթապյանի անպատկառ արշավը Ազատ Օրդուխանյանի դեմ պայմանավորված է քաղաքական դրդապատճառներով, որի պատվիրատուն «ընդդիմադիր» Դաշնակցությունն է, կուսակցություն, որը Հայաստանի Հանրապետության վարչախմբի հեղինակազրկված հենարանն է սփյուռքում: Գերմանահայոց կենտրոնական խորհրդի արկա ճգնաժամը պետք է դիտարկել նաև Դաշնակցության կորցրած հեղինակությունը գոնե Խորհրդում վերակենդանացնելու ձգտման փորձ, որը պետք է նպաստի Գերմանիայում Հայաստանի Հանրապետության հնարավոր դեսպան Վահան Հովհաննիսյանի «ազգանպաստ» առաքելության քաղաքական հարթակի նախապատրաստմանը:

Գերմանահայոց կենդրոնական խորհրդի մի խումբ անդամներ